

ԵՐԿԼԵԶՎՈՒԹՅԱՆ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՒԱՅԻ ԽՈՍԲԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Գրիգորյան Ա.Գ.

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու

Մելիքջանյան Ա.Կ.

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի մագիստրոս, Ստեփանավանի ԲՀՄ գնահատման կենտրոնի լոգոպեդ

Հանգուցային բառեր և արտահայտություններ. Երկլեզվություն, հաղորդակցման ունակություններ, դոմինանտ լեզու, խոսքի խանգարումներ, հնչարտաբերության դժվարությունները, հնչյունային խանգարումներ, վերլուծական հմտություններ, ռիսկի գործոն, դիսլեքսիա, դիսգրաֆիա, հոգեբանական դեպրիվացիա:

Երկլեզվություն /բիլինգվիզմ bi լատ. կրկնակի – lingua լատ. լեզու/ համարվում է արդի հասարակության միջմշակութային կապերի անբաժանելի մասը և մանկավարժների կողմից այն դիտարկվում է որպես առավել արդիական խնդիրներից մեկը: Համաշխարհայինացումը պայմանավորված է ազգությունների, մշակույթների փոխհարաբերություններով և որպես հետևանք՝ լեզուների փոխազդեցությամբ: Հայտնի է, որ երկլեզվությունը, որպես լեզվական երևույթ, համաշխարհային պատմության մեջ ամուր արմատավորված է: Այս երևույթի ամենահաջողված և կիրառելի ձևակերպումը տվել է Ու. Վայնշայիդը՝ «Գործնա-

կանում երկու լեզուների փոխ առ փոխ կիրառումն անվանվում է երկլեզվություն»: Ըստ Վ. Ռոզենգվեյգի՝ «Երկլեզվություն ասելով՝ հասկացվում է երկու լեզուների տիրապետում, և վերջիններիս կանոնավոր փոխարինումը մեկը մյուսով՝ պայմանավորված հաղորդակցման իրադրությամբ»: Ամերիկացի հոգեբան և լեզվաբան Դժ. Ֆիշմանը տվել է հետևյալ ձևակերպումը՝ «Երկլեզվությունը մեկից ավելի լեզուներով շփման մեջ մտնելու ունակությունն է»:

Ավստրիացի փիլիսոփա Լ. Վիտգենշտեյնը տրամաբանական-փիլիսոփայական աշխատություններում նշում է. «Իմ լեզվի սահմանները ցույց են տալիս իմ աշխարհի սահմանները»:

Գիտական գրականության մեջ երկլեզվության ընդհանուր հարցերը դիտարկվում են լեզվաբանության, ինչպես նաև հոգեբանության, սոցիոլոգիայի, հոգելինգվիստիկայի տեսանկյունից, բացահայտվում են երկլեզվության առաջացման պատճառները, նրա էթնոմշակութային արմատները [4,

Էջ 21-36]:

Երկլեզվությունը բազմակողմանի և ճկուն երևույթ է: Առանձնացվում է երկլեզվության ուսումնասիրման երեք տեսանկյուն.

1. Լեզվաբանական (սոցիալլեզվաբանական)
2. Հոգեբանական
3. Մանկավարժական

Գիտության մեջ երկլեզվությունն ընդունվում է որպես դրական երևույթ: Մեր իրականության պայմաններում երկլեզվության զարգացման գերագույն նպատակն է նպաստել ազգերի ամուր մերձեցմանը, նրանց մշակույթի փոխզարգացմանը, գիտության և տեխնիկայի ոլորտում առավելագույն բարձունքների նվաճմանը:

Երկլեզվության արդիականությունը բնորոշվում է 21-րդ դարի սկզբին երկլեզվության դաստիարակության՝ որպես եվրոպական երկրների կրթական քաղաքականության առաջնային ուղղություններից մեկը [7, էջ 98-120, 8, էջ 96-103]:

Երկլեզվության խնդիրը բազմաբնույթ է: Նրա տարբեր ոլորտները դիտարկվել են Ս. Բակերի, Տ. Սկուտնաբ-Կանգասի, Կ. Բեյկերսի, Յ. Սչումանի, Վ. Մաքեյի, Ն.Ի. Ժինկինի, Է.Ս. Վերեշագինայի, Ն.Վ.Իմեդաձեի և այլոց աշխատություններում:

Ըստ մի շարք հետազոտությունների՝ ժամանակակից աշխարհում մանկական երկլեզվությունն ընդգրկում է համարյա երկրագնդի երեխաների կեսին, և այս հակումը գնալով աճում է [1, էջ 115, 2, էջ 74, 6, էջ 25]:

Շփման առօրյա պայմաններում երկլեզու երեխաներին բնորոշ է տարերային լեզվական զարգացումը: Կան դեպքեր, երբ երեխա-

ները միալեզու հաղորդակցական ընտանիքներից հաճախում են օտարալեզու մանկապարտեզ կամ դպրոց: Բնականաբար, այն անդրադառնում է երեխայի խոսքի զարգացման աստիճանի և սեփական մտքերը արտահայտելու կարողության և անձի ձևավորման վրա [9, էջ 67-81]:

Մանկավարժության և հոգեբանության մեջ մշտապես դիտարկվում են երեխաների օտար կամ երկրորդ լեզվի ուսումնասիրման խնդիրները նախադպրոցական կամ դպրոցական տարիքում [4, էջ 52-64, 5, էջ 114-131, 6, էջ 12-45]: Միաժամանակ, երկլեզվության զարգացման իրավիճակը մնում է մի կողմում, բնական պայմաններում՝ խառը ընտանիքներում, որտեղ երեխայի ծնողները տարբեր լեզուների կրողներ են, իսկ երեխաները մեծերի կամ ընտանիքից դուրս այլ ազգի տարեկիցների հետ շփում են մեկ այլ լեզվով:

Մյուս կողմից՝ օտարալեզու ուսումնական հաստատություններում տարբեր լեզվական մշակույթ կրող անձանց սովորելը մշտապես դժվարություն է առաջացնում: Այդպիսի պայմաններում բնականաբար երեխաները դժվար են հարմարվում իրենց համար օտար լեզվական միջավայրում: Երեխաների մեծ մասը երկար ժամանակ բառերի և դրանց կառուցվածքների մի լեզվից մյուսի անցման խնդիրը հաղթահարում են բառացի թարգմանության միջոցով: Ոչ բավարար բառապաշարը խոչընդոտում է խոսքի ընկալման լիարժեքությունը և մի լեզվից մյուսով թարգմանելու համապատասխան կարողության ձևավորումը:

Տ.Սկուտնաբ-Կանգասը նշում

Է, որ այս երեխաների կրթությունը, ոչ բավարար սովորած լեզվով առաջացնում է լարվածություն, սովորողին անհրաժեշտ է ոչ միայն լեզվական, այլ նաև հաղորդակցման ունակություններ, արտահայտությունները պետք է ձևավորված լինեն ոչ միայն ճիշտ և հասկանալի, այլ սոցիալական նորմերին համապատասխան: Երեխան ստիպված է միաժամանակ ընկալել և՛ երկրորդ լեզվի նորմերը, և՛ ստացած տեղեկույթը: Դա հաճախ հանգեցնում է սթրեսի, ինքնագնահատականի իջեցման, սեփական անձի նկատմամբ անբավարարվածության և օտարացման: Այս հարցում մեծ դեր են խաղում աշակերտի անհատական հատկանիշները, ժառանգականությունը, ընտանեկան դաստիարակությունը և իհարկե մայրենի լեզվի զարգացման մակարդակը [7, էջ 65]:

Երկլեզվության դեպքում խոսքում փոխազդեցության մեջ գտնվող երկու լեզուներից մեկը մյուսի նկատմամբ համարվում է առաջնային: Վերջինս դիտարկվում է որպես դոմինանտ, գերիշխող, այսինքն՝ երկլեզու անձն այն տիրապետում է ավելի լավ: Հետաքրքիր է այն փաստը, որ դոմինանտ լեզուն պարտադիր չէ, որ լինի այն լեզուն, որը յուրացվել է առաջինը, պայմանավորված սոցիալական իրավիճակներով՝ շատերը երկրորդ լեզուն ավելի լավ են տիրապետում:

Տիրապետելով երկրորդ լեզուն՝ ինչպես երեխաները, այնպես էլ մեծերն անցնում են երկրորդ լեզվի ուսումնասիրման հայտնի փուլերը: Դրանք բազմագործառույթ են և անփոփոխ՝ անկախ այն բանից, լեզուն ուսումնասիրվում է բնական, թե ֆորմալ միջավայրում: Լեզվի

տիրապետման սկզբնական շրջանում բառապաշարն աղքատ է իսկ քերականությունը պարզունակ: Լեզվական միավորների ընկալումը ընթանում է աստիճանաբար: Հերթականությունը, որով ընկալվում են որոշակի քերականական կամ լեզվաբանական միավորները, անհատական է: Գոյություն ունի նաև տարբերություն երկրորդ լեզվի ընկալման տեմպի և տիրապետման մակարդակի միջև: Աստիճանները բազմագործառույթ են. լեզվական միավորների տիրապետման հերթականությունը կարող է լինել անհատական, իսկ արագությունը յուրաքանչյուր իրավիճակում տարբեր է:

Ըստ մասնագետների՝ երկլեզվությունը կարող է ունենալ իր դրական և բացասական կողմերը: Հայտնի է, որ երկլեզվությունը (հատկապես բնական երկլեզվությունը) դիտարկվում է որպես առավելություն: Ուրեմն ինչու՞ են ժամանակակից հասարակության մեջ երբեմն շեշտադրվում երկլեզվության առաջացրած խնդիրները:

Հետազոտությունները ցույց են տվել, որ այն երեխաները որոնք խոսում են երկու լեզվով, ունեն հարուստ բառապաշար, զարգացած մտածողություն, լավ հիշողություն, ակտիվորեն տիրապետում են վերլուծական հմտություններին: Երկրորդ լեզվի վաղ յուրացումը խթանում է գլխուղեղի՝ խոսքի զարգացմանը պատասխանատու բաժինների զարգացումը[4, էջ 67-80, 8, էջ 96-103]:

Մեկ հոդվածումի սահմանում փորձել ենք դիտարկել երկլեզվության՝ ոչ միայն դրական ազդեցությունը, որը լեզվի տիրապետման հմտությունների դեպքում առա-

ջացնում է մտքի ճկունություն, խթանում է սոցիալական հարմարեցումը, ձևավորում է ընդգծված կատարողական վերահսկողություն, կայուն ուշադրություն և այլն, այլև դրա առկայության դեպքում՝ խոսքի զարգացման խնդիրների մասին: Մեր խոսքն ավելի շատ մանկական երկլեզվության մասին է, երբ մարդու ուղեղի զարգացումը լեզվական նյութի տիրապետման համար ապահովում է լիարժեք հնարավորություններ:

Երկլեզու երեխաները հաճախ ավելի ուշ են սկսում խոսել քան իրենց տարեկիցները: Սա պայմանավորված է տարբեր լեզուների լեզվական համակարգերի կառուցվածքով: Խոսքի զարգացման վաղ շրջանում՝ երկլեզվությունը կարող է առաջացնել հնչարտաբերման, խոսքի առգանության խանգարումներ, մայրենի լեզվի քերականական կառույցների սխալ գործածություն, խոսքի ընդհանուր թերզարգացում, կենտրոնական նյարդային համակարգի աշխատանքի ծանրաբեռնվածություն: Վաղ մանկության տարիքն առանձնանում է ընդհանուր երկլեզվության համակարգից այն պատճառով, որ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում պետք է խոսել ոչ թե լեզվի տիրապետման որակի, մակարդակի, անհատի ազգային առանձնահատկությունների, լեզվական և քերականական կառույցների կիրառման, այլ խոսքի ընդհանուր զարգացման մակարդակի մասին:

Հարց է առաջանում արդյոք կարելի՞ է երկրորդ լեզվի զարգացումը թողնել ինքնահոսի, երբ այն զարգանում է անկանոն, նվազագույն ծավալով, թե՞ երկու լեզուներ

րի զարգացումը պետք է լինի ուղղորդված և վերահսկված:

Մասնագետների կատարած հետազոտությունները փաստում են ինքնաբուխ երկլեզվության բացասական հետևանքների մասին: Հաճախ երկլեզու երեխաների մեջ առաջանում են խոսքի տարբեր խանգարումներ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ երեխան չի կարողանում ընկալել չափից ավելի ծավալուն տեղեկույթ, տարբեր լեզուներին բնորոշ առանձնահատկությունները, որոնք էլ առաջ են բերում խոսքի լիարժեք ընկալման, ճիշտ ձևակերպման և վերարտադրման անկանխատեսելի դժվարություններ:

Ե. Գոլիկովան, ուսումնասիրելով հայ-ռուսական երկլեզու երեխաներին, նշում ռուսաց լեզվի գրավոր աշխատանքներում հանդիպող նրանց դժվարությունների մասին, որոնք արտահայտվում են դիսգրաֆիայի տարբեր ձևերով: Երկլեզու երեխաների խոսքի զարգացման մակարդակով է պայմանավորված նրանց դպրոցական ուսումնական հաջողությունները: Շատ երեխաների՝ ճիշտ հնչարտաբերության դժվարություններն ուղեկցվում են հնչյունային խանգարումների զարգացմամբ: Հնչյունների բացթողումները և փոխարինումները վկայում են երկլեզու երեխաների հնչյունային ընկալման անբավարարության մասին: Նրանք հիմնականում շփոթում են այն բառերը, որոնք ունեն նմանատիպ հնչողություն: Օրինակ՝ սար – գառ, քար – գառ, մուկ – մուգ, մագ – մաս և այլն: Այս երեխաների խոսքի քերականական կողմը նույնպես բնութագրվում է մեծաքանակ սխալներով, իմաստով սխալ բառե-

րի կիրառումով, որոնք ազդում են ազատ և սահուն հաղորդակցման վրա: Նրանց կապակցված խոսքը շատ անկայուն է, շփման մեջ, հաճախ գերադասում են հանդես գալ որպես պատասխանողներ, այդ առումով՝ ավելի տուժված է մենախոսությունը: Բնականաբար երկլեզու երեխաների բանավոր խոսքի խանգարումները հիմնականում անդրադառնում են գրավոր խոսքի վրա, որն էլ հանգեցնում է ուսումնական դժվարությունների [6, էջ 27-48, 9, էջ 75-96]:

Մասնագիտական գրականության ուսումնասիրությունն ու վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրահանգումները՝

1. Երկլեզվությունը կարող է հանդես գալ որպես խոսքի խանգարումների առաջացման «ռիսկի գործոն»:
2. Երկու լեզվի միաժամանակ յուրացման դեպքում հաճախ առաջին /դոմինանտ/ լեզվական հա-

մակարգն ազդում է երկրորդի վրա, ինչի արդյունքում տեղի է ունենում լեզվական համակարգերի շփոթում՝ առաջացնելով մի շարք խնդիրներ:

3. Ամենատարածված խնդիրներից են հնչարտաբերական սխալները, լեզվի քերական կառույցների խանգարումները, սխալ շեշտադրումը, որպես հետևանք՝ գրավոր խոսքի խանգարումներ՝ դիսլեքսիա և դիսգրաֆիա:
4. Երեխայի զարգացման վաղ տարիքում երկլեզվությունը կարող հանգեցնել կենտրոնական նյարդային համակարգի ծանրաբեռնվածության, պատճառ դառնալով աշխատունակության, դրդապատճառայնության ընդհանուր տրամադրության անկմանը:
5. Ոչ լիարժեք խոսքը, հաղորդակցման խնդիրները կարող են առաջացնել հոգեբանական դեպրիվացիաներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Аршавский В. В. Различия, которые нас объединяют. Рига, 2001, ст. 234.
2. Божович Л. И. “Речь и практическая интеллектуальная деятельность ребенка (экспериментально теоретическое исследование). Культурно-историческая психология”, N 1-3, 2006. ст. 156.
3. Вагнер В.Н. “Методика преподавания русского языка англоговорящим и франкоговорящим”. М., 2001.
4. Верещагин Е.М. Психологическая и методическая характеристика двуязычия (билингвизма). 1999, ст. 160.
5. Лыготский Л. С. Избранные психологические исследования (Мышление и речь).-Издательство Лабиринт, М., 1999, ст. 350.
6. Голикова Е. О. Формирование навыка письма у младших школьников с армянско-русским билингвизмом. Москва, 2006, ст. 162.
7. Имедадзе Н.В. Экспериментально психологическое исследование овладения и владения вторым языком. Тбилиси, 1978, ст. 228.

8. Чиркина Г.В. Программы дошкольных образовательных учреждений компенсирующего

вида для детей с нарушениями речи: 2008, ст. 272.

РЕЗЮМЕ

ВЛИЯНИЕ БИЛИНГВИЗМА НА ПРОЦЕСС РАЗВИТИЯ РЕЧИ РЕБЕНКА

Григорян А. Г.

Доцент кафедры логопедии и восстановительной терапии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна
кандидат педагогических наук

Меликджанян А.К.

Студентка второго курса магистратуры кафедры логопедии и восстановительной терапии Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна

В статье представлены различные аспекты билингвизма в процессе раннего развития речи ребенка.

SUMMARY

THE INFLUENCE OF BILINGUALISM ON THE PROCESS OF SPEECH DEVELOPMENT

Grigoryan A.

Associate professor Chair of Speech and Rehabilitation therapy,
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan,
Candidate of Pedagogical Sciences

Melikjanyan A.

Master degree second year student Chair of Speech and Rehabilitation therapy
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan

In the article the bilingualism is presented as existing linguistic, versatile and dynamic phenomenon in modern society. Presenting the positive aspects of bilingualism we

consider it necessary to address the process of the emergence of negative manifestations in early child development.